7.12.2021
348-84

Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային
անվտանգության տեսչական մարմնի
ղեկավար Գեղամ Շախբազյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Շախբազյան,

Երևան քաղաքի Սիլիկյան թաղամաս հին խճուղի 60/1 հասցեի հարևանությամբ ինքնակամ կառուցված և շահագործվող քարի արտադրամասի գործունեության վերաբերյալ Շուշան Դոյդոյանի հարցմանն ի պատասխան Տեսչական մարմինը 2021թ. հոկտեմբերի 12-ին ուղարկված գրությամբ տեղեկացրել է. «Երևանի քաղաքապետարանի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումները ձեռնարկել են ինքնակամ կառույցի քանդմանն ուղղված միջոցներ, մասնավորապես՝ ՀՀ վարչական դատարանի վարույթում գտնվող ՎԴ/5941/05/21 վարչական գործով Երևանի քաղաքապետարանի կողմից միջնորդություն է ներկայացվել կիրառված հայցի ապահովումը վերացնելու մասին»:

Ըստ գրության՝ վերոգրյալ միջնորդության հիմքում դրվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության կողմից տրված 8/043 փորձագիտական եզրակացությունը, համաձայն որի՝ քննարկվող արտադրամասի հաստոցների աշխատանքի հետևանքով ձայնի համարժեք մակարդակը գերազանցում է թույլատրելի մակարդակը:

Տեսչական մարմինը նշել էր, որ «ՀՀ վարչական դատարանի կողմից միջնորդությունը բավարարելու դեպքում Երևանքի քաղաքապետի պարտականությունների չկատարման պարագայում կձեռնարկվեն համապատասխան միջոցներ»:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել տեղեկություններ վերոնշյալ գործի ուղղությամբ իրականացված միջոցառումների վերաբերյալ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատարանը մերժել է քաղաքապետարանի միջորդությունը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am

Ուշադրություն՝ Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան